№ 262 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27 1902 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27 № 262

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվա՝ 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Դամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուավ.

Յայտարարութիւնների համար վճարում են խրատանիշը տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-Դ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1903** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

՝ամեն օր, բացի տօներին ;աջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ եւ վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ. երկու ամսվանը՝ 2 ռ. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ ԲԱԳԻՒՄ—Ն. Դաւթեանի մօտ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Որոնենք գործնական միջոցներ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները. Պրոֆ. դատաստանի վճիռը. Նամակ Բագուից. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դարերի ճամբորդը։

ՈՐՈՆԵՆՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Մեր գիւղերում յաճախ լսվում է այս խօսքը. «Գնացէք քաղաք եւ որ եւ է պարապմունք գտնելով՝ փող բերէք գիւղի համար»։ Եւ շատ գիւղերից գնում են պանդուխտներ դէպի քաղաք մշակութիւն առնելու եւ փող վաստակելու իրանց տնային պիտոյքների համար։ Միւս կողմից՝ տարիների ընթացքում լսվում է եւ մի ուրիշ, բոլորովին հակառակ ձայն, որ ասում է. «Վերադարձէք ձեր գիւղերը եւ աշխատեցէք ձեր հողից եւ տնտեսութիւնից ստանալ այն օգուտները, որ այժմ որոնում էք պանդխտութեան մէջ, ուր փողի հետ միասին դուք ձեռք էք բերում զանազան հիւանդութիւններ եւ քայքայում էք ձեր առողջութիւնը»։

Մի բան պարզ է, որ գիւղացին ներկայումս չէ կարողանում իր գիւղական շրջանում բաւարարութիւն տալ իր բոլոր տնային պահանջներին եւ ապահովել իր անհրաժեշտ պիտոյքները։ Նա կարօտ է նոր միջոցների, նա պէտք է իր ձեռքին ունենայ աւելի արդիւնքներ, աւելի փող, որպէս զի կարող լինի թէ տան կարիքները հոգալ եւ թէ հասարակական ու պետական տուրքերը հատուցանել։

Եթէ մենք ցանկանում ենք, որ գիւղացին աւելացնէ իր եկամուտները եւ մի եւ նոյն ժամանակ գործէ իր գիւղական շրջանում, մնում է այնպէս կազմակերպել գործը, որ նա կարող լինի մի կողմից աւելի արդիւնք ստանալու իր գիւղատնտեսութիւնից եւ աւելի լաւ յատկութեան, իսկ միւս կողմից՝ իւրացնէ մի շարք տնային արհեստներ, որոնց արդիւնքները թէ տեղական պէտքերին ծառայէին եւ թէ կարող լինէին շահաւէտ գներով վաճառահանվել։

Քանի որ մենք օգնած չենք լինի գիւղացուն՝ անելու մէկը կամ միւսը, քանի որ մենք պատրաստ չենք լինի գործնականապէս իրագործելու մեր տուած խորհուրդները եւ խրատները, մինչեւ այդ՝ մեր դատողները եւ ցանկութիւնները կը մնան միայն դեղեցիկ խօսքեր։ Իսկ ցանկալի է, որ մենք կարող լինէինք իրապէս օգնութիւն հասցնել մեր գիւղացուն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Երկուշաբթի, նոյեմբերի 25-ին, հայոց դրամատիական ընկերութեան խումբը ներկայացրեց Շէքսպիրի «Անսանձի Սանձահարումը» կոմէդիան, թարգմանութիւն Մանդինեանի։

Ինչպէս յայտնի է, մինչեւ այսօր եւրոպական թատրոնական բեմերուարից դուրս չէ ձգված Շէքսպիրի այդ գրուածքը։ Անշուշտ, Շէքսպիրի ժամանակ եւ նոյն իսկ 18-րդ դարում, այդ տեսակ պիէսները խաղալը հասկանալի էր եւ կարող էր ժամանակակից համարվել, բայց այժմս, XX-րդ դարում, պիէսան այլ եւս այժմէութիւն չէ ներկայացնում, քանի որ, չը պարունակելով իր մէջ ոչ մի իդէալական կեանք, նա նկարագրում է միայն իսալական ազնուականութեան կենցաղը, այն եւս մի բացառիկ դէպք այդ կենցաղից։ Եւ ինչ բարոյական եզրակացութիւն կարող են հանել այժմ մեր թատրոնի հանդիսատեսները, երբ նրանց ցոյց է տրվում, թէ վերօնացի մի ազնուական կարողացաւ այնքան տանձահարել մի չար ազնուական աղջկայ, որի հետ ամուսնացել էր, եւ զսպել նրան մինչ այն աստիճան, որ երբ նա հրամայում էր այդ աղջկան ջոքել եւ իր ոտքերը համբուրել, նա, այդ աղջիկը, որ ծեծում էր տանը քրոջը, հիւրերին, անարգում էր հօրը, անմասնչ հնազանդում էր եւ ջոքում, համբուրում իր ամուսնու գարշապարները։ Այդ բաւական չէ. այդ նախկին կամակոր կինը սկսեց քարոզել, թէ կինը ամուսնու գոյքն է, սեփականութիւնը, իրը, սարկուհին, որի հետ նա կարող է վարվել, ինչպէս կամենայ։ Ճիշդ է, պիեսի մէջ կայ բնաւորութիւնների մաքառում եւ որոշ հոգեբանական գիծ, բայց դա բաւական չէ։

Հասարակութիւնն այլ եւս չէ սիրում այդպիսի պիէսներ. Թատրոնը գրեթէ դատարկ էր, չը նայելով որ պ. Ե. Արէլեան շատ գեղեցիկ խաղաց Պէտրուչիոյի, վերօնացի ազնուականի դերը, ինչպէս եւ տ. Մայսուրեան՝ չար աղջկայ՝ Կատարինէի դերը։ Բայց լաւ դերասաններն եւս անկարող են փրկել մի պիէսա, որ ոչ իդէալական է, ոչ եւս ժամանակակից հետաքրքրութիւն է ներկայացնում։

Հ. Ա.

ՊԱՏԻՒ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՎՃԻՌԸ

12/22 հոկտեմբերի—4 նոյեմբերի 1902 թ.

Առենակալում են. հրաւիրված՝ պ. Ռուբէն Յովհաննէսեանի կողմից՝ պ.պ. Աւետիք Եղեկեան եւ Մկրտիչ Նաւասարդեան. պ. Ներսէս Դաւթեանի կողմից՝ պ.պ. Սամսոն Յարութիւնեանց եւ Աստուածատուր Վաչեանց։ Ներկայ են. պ.պ. Ն. Դաւթեան եւ Ռ. Յովհաննէսեան։

Զոյգ թիւն անյարմար դատելով՝ հարկ էր հրաւիրել մի հինգերորդին, իբրեւ նախագահ։ Կողմերի եւ դատաւորների համակամ հաւանութեամբ հրաւիրվեց պ. Սմբատ Խաչատրեան։

Առաջնը լսեց պ. Ներսէս Դաւթեանի մեղադրութիւնը պ. Ռուբէն Յովհաննէսեանի դէմ։

Գ. Ն. Դաւթեան «Մշակ» լրագրի ներկայ տարվայ յուլիսի № 143 ում «Ո՞վ է մեղաւոր» յօդուածի մէջ հետեւեալ հատուածն ունի՝—

—Ինչո՞ւ եմ կոյր, ես տեսնում եմ քեզ, տեսնում եմ քո աչքերը, որոնք փայլում են խաւարի մէջ, ես տեսնում եմ, որ դու ծերունի ես, ես լսում եմ քո հեւոցը, քո շնչառութիւնը, քո անքոցը, սուտ, ինչո՞ւ ես անքուն։

—Ինչո՞ւ եմ անքուն, ողորմելի անմիտ, զուր չէի ասում, որ դու կոյր ես, որ դու չես տեսնում այն, ինչի տակ ճռնչում են իմ ոսկորները, ինչի տակ ես հեւում եմ ու անքուն։ Նայիր մէջքիս, մօտեցիր եւ նայիր ուշադրութեամբ։ Ես մօտեցայ, նայեցի. նրա մէջքին մի մութ, անձեւ, անագին զանգուած կար, իսկ եւ իսկ մեզ շրջապատող խաւարի գոյնին, այնպէս որ նա խառնվում էր այս գիշերվայ հետ, ինչպէս նրա մի մասը։

—Այդ ինչ է մէջքիդ։

—Քեզ ասացի, որ ես դարերի ճամբորդն եմ, իսկ այս...

Վո՛ւ, վը՛զզ, վուու...

—Ուհ, այս քամին չէ թողնում, որ խօսեմ, նա քշում է ինձ, քշում անդադար... ես դարերի թափառականն եմ եւ մէջքիս՝ դարերի բեռն է, որ քաշ եմ տալիս ինձ հետ անվերջ, անվերջ...

—Դարերի բեռն ինչ է։

—Դարերի բեռը... լսիր, եւ նա օրօրեց մէջքի մութ զանգուածը ահագին թափով եւ այնտեղից հնչվեցին հոգի խեղդող ձայներ, սպանիչ, սրրատամիկ։

—Լսեցիր, շարունակեց նա, արցունքի, արեան, հառաչանքի մի խաւար զանգուած է դրված իմ մէջքին, աւելի ծանր, քան լերան ժայռ։ Դու տեսնել ես այն անիծված մեռելները, որոնց վրա տարիների ընթացքում ճամբորդները մի մի քար են ձգում եւ կազմվում է մի ահագին բլուր. այ այն մեռելներն այնքան իրաւունք ունեն մի տեղ, մի անկիւն էր փնտրում իրը ապաստան, բայց որտեղ, մենք մի վիճակում էինք—ես ու քամին, լայն, ձիւնապատ անապատում մենակ ու անտէր, փախստական ու լալկան։

Ես շտապում էի, ճանապարհս հեռու էր, շատ հեռու. այնպիսի անապատներ ես շատ եմ անցել. գիտես, ինձ թւում է, թէ ես միշտ անապատում եմ թափառում, լայնարձակ, անծայր անապատում, ուր, ինձանից ու քամուց բացի, ոչ ոք չը կայ, ոչ ոք... ասա աշխարհն ինչո՞ւ է անապատ։

Այն գիշեր հոգիս այնպէս էր ճնշվում, սիրտս քամվում էր, ճմլվում. խաւարը, խաւարը, ինչ խեղդող է։ Ես ուզում էի մարդ տեսնել, մի կենդանի շունչ պատահել այն մռայլ ամայութեան մէջ, բայց եթէ պատահէի, կանիծէի ժամը, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. իմ պատահած մարդիկ եղել են միշտ տանջանքի աղբիւր, ինձ զայրացնում են երջանիկները իրանց անասնական անհոգութեան մէջ, ինձ ցաւեցնում են դժբաղդները իրանց խեղճութեան մէջ, իրանց անտէր, անդիտակից թշուառութեամբ։

Ձիւնի փոշու մէջ կորած եւ հեւալով, ես վազում էի շուտ կարելու անապատը. չէ՞ անշուշտ նա վերջ ունէր, աշխարհում ամեն բան վերջ ունի, ես իսկ փիլիսոփայ եմ, այդ լաւ գիտեմ, մէկ ցաւն է անվերջ, այն էլ ես կը վերջացնեմ մի օր։

Եւ վազում էի. յանկարծ ինձ թւաց, թէ ոտնաձայն եմ լսում, ծանր, յոգնած ոտքի ձայն, որ գալիս էր հեռուից, բայց ուղիղ իմ վրա։ Ականջ դրի, քամին պարզ, որոշ հասցնում էր ինձ այդ ձայնը, ես շտապեցի էլ աւելի, որ անծանօթ եկողը չը հասնի։ Մի փոքր յետոյ ձայնն աւելի լսելի դարձաւ, եկողը երեւի ինձանից արագ էր քայլում. մէկ էլ այժ տուի ոտներիս, եւ յանկարծ մի ծանր մարմին դիպաւ ինձ եւ քիչ մնաց, որ դէն չպրտէ։ Ես օրօրվեցի եւ կանգ առայ, նայեցի,—իմ կողքին հեւալով, անքալով ցցվեց մի տարօրինակ մարդ։ Նա նայում էր երեսիս, ուղիղ աչքերիս մէջ. թանձր խաւարում անգամ ես տեսնում էի նրա չեշտակի հայեացքը, տեսնում էի այդ կրակ կորած աչքերը. մենք նայում էինք իրար, հեւում էինք, գոլ շնչերով տաքացնում իրար երեսը։

Եւ փչում էր քամին վո՛ւ, վը՛զզ, եւ ձիւնի փոշով ծածկում էր մեր գլուխները. վերջապէս ես մի կողմ քաշվեցի նրան ճանապարհ տալու համար, բայց նա կանգնած մնաց եւ շարունակում էր նայել ինձ մի եւ նոյն չեշտակի, կրակոտ հայեացքով։ Ես աւելի ետ քաշվեցի։

—Ճանապարհ ես տալիս ինձ, այդ լաւ է, ասաց նա, այդ լաւ է, ամենքն են ինձ ճանապարհ տալիս, երբ պէտք չէ տալ եւ փակում են առաջս, երբ պէտք է քայլել, քայլել...

—Ո՞վ ես դու, հարցրի։

—Ո՞վ եմ ես, չե՞ս ճանաչում։

—Ոչ, չեմ ճանաչում, եւ հազիւ եմ տեսնում։

—Միշտ այդպէս է, ինձ չեն ճանաչում, երբ պէտք է, որ ճանաչեն, եւ ճանաչում են, երբ ամենեւին հարկաւոր չէ։

—Բայց ո՞վ ես դու։

—Ես դարերի ճամբորդն եմ։

—Զեմ հասկանում։

Պատասխանի փոխարէն նա ծանր անքաց։

—Ինչո՞ւ ես անքուն։

—Ինչո՞ւ եմ անքուն, դու կոյր ես։

—Ինչո՞ւ եմ կոյր, ես տեսնում եմ քեզ, տեսնում եմ քո աչքերը, որոնք փայլում են խաւարի մէջ, ես տեսնում եմ, որ դու ծերունի ես, ես լսում եմ քո հեւոցը, քո շնչառութիւնը, քո անքոցը, սուտ, ինչո՞ւ ես անքուն։

—Ինչո՞ւ եմ անքուն, ողորմելի անմիտ, զուր չէի ասում, որ դու կոյր ես, որ դու չես տեսնում այն, ինչի տակ ճռնչում են իմ ոսկորները, ինչի տակ ես հեւում եմ ու անքուն։ Նայիր մէջքիս, մօտեցիր եւ նայիր ուշադրութեամբ։ Ես մօտեցայ, նայեցի. նրա մէջքին մի մութ, անձեւ, անագին զանգուած կար, իսկ եւ իսկ մեզ շրջապատող խաւարի գոյնին, այնպէս որ նա խառնվում էր այս գիշերվայ հետ, ինչպէս նրա մի մասը։

—Այդ ինչ է մէջքիդ։

—Քեզ ասացի, որ ես դարերի ճամբորդն եմ, իսկ այս...

Վո՛ւ, վը՛զզ, վուու...

—Ուհ, այս քամին չէ թողնում, որ խօսեմ, նա քշում է ինձ, քշում անդադար... ես դարերի թափառականն եմ եւ մէջքիս՝ դարերի բեռն է, որ քաշ եմ տալիս ինձ հետ անվերջ, անվերջ...

—Դարերի բեռն ինչ է։

—Դարերի բեռը... լսիր, եւ նա օրօրեց մէջքի մութ զանգուածը ահագին թափով եւ այնտեղից հնչվեցին հոգի խեղդող ձայներ, սպանիչ, սրրատամիկ։

—Լսեցիր, շարունակեց նա, արցունքի, արեան, հառաչանքի մի խաւար զանգուած է դրված իմ մէջքին, աւելի ծանր, քան լերան ժայռ։ Դու տեսնել ես այն անիծված մեռելները, որոնց վրա տարիների ընթացքում ճամբորդները մի մի քար են ձգում եւ կազմվում է մի ահագին բլուր. այ այն մեռելներն այնքան իրաւունք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐԵՐԻ ՃԱՄԲՈՐԴԸ

(Շարունակութիւն)

Ղարիբ էի օտար երկրում, ասաց նա հառաչելով, ղարիբ ու սեւաւոր. ինչպէս լինում են բոլոր ղարիբները. դու խօսք համձայն ես, որ օտարութեան մէջ ուրախ մարդն էլ ղարիբ չէ։ Ցիշում եմ, ուշ գիշեր էր, ցուրտ, ձմեռ, եւ ես գնում էի մի անծայր անապատով, փախչում էի իմ գլխից ազատվելու համար. ես նոյն իսկ մտածում էի, թէ ինչպէս այդ չարատանջ ուղեղս թաղեմ մի տեղ, թող հանգստանայ, իսկ ես փախչեմ, փախչեմ մի ապատան գրանեմ ինձ համար։ Այդպէս էի մտածում, դէ ինչ անէի, ես փախել էի բնակութիւններից, որովհետեւ տեսայ փողոցում դարձեալ մի ծերուկ, մի տանջված ողորմելի ծերուկ, որ ձիւնների միջից, ոտաբոբիկ, դողդողալով քաշ էր տալիս դարձեալ մի ահագին բեռ, անքալով, հեծելով, լալով. ցաւոտ բան է էէ, ծեր մէջքը մեծ բեռի տակ։

—Աշխարհում այդ շատ է պատահում, բարեկամ. ասացի ես նրան հանգստացնելու համար։

—Ցաւն էլ այդ է, որ շատ է պատահում, եթէ մէկը լինէր, իսկ իմ ուղեղը հանգիստ կը լինէր, շատ են, շատ են բեռների տակ ճարճատող ոսկորները. եւ քանի տեսակ բեռներ...

Հիւսիսային քամին փչում էր կատաղաբար, մանչում էր իմ գլխի վերեւը, իմ շուրջը, խաղում էր ձեան հետ, մռմռում. հառաչում էր

«Մէկը յանդգնում է հրապարակով ցաւակցութիւն, կարեկցութիւն արտայայտել դէպի աշխատաւոր դատակարգը, նրա որպէս թէ պաշտպանը հանդիսանալ, հայհոյել ուրիշներին, որ հարստահարում են, նրանց դրութեան մէջ չեն մտնում եւ այլն եւ այլն։ Բայց երբ նոյն բանաւոր դատակարգի միամիտ անդամները հաւատում են այդ մեծախօսին եւ իրանց անտեսած կօղէկները նրան են յանձնում, նա առանց խղճահարվելու մաքրազարդում է այդ կօղէկները եւ լրբաբար դարձեալ շարունակում է գրել...

Գ. Ռ. Յովհաննէսեան, զրկվածների, բանւորների մասին Բագուից յաճախակի թղթակցողը յիշեալ լրագրին, իր վրա է ընդունում պ. Դաւթեանի ակնարկը եւ հրաւիրում է վերջինիս, նոյն «Մշակի» № 152-ում զետեղված նամակով, որ նա, եթէ չէ ժխտում նկարագրված մէկի պատկերի տակ իրան—Յովհաննէսեանին—աչքի առաջ ունենալը, նշանակէ իր կողմից երկուսին, որոնք ուրիշ երկուսի հետ, որոնց կը հրաւիրէ Ինքն—Յովհաննէսեան, քննեն խնդիրը եւ երեւան հանեն ճշմարտութիւնը։

«Գ. Ն. Դաւթեան մի երկրորդ թղթակցութեամբ «Մշակի» № 158-ում՝ «На ворѣ шапка горитъ» ասելով եւ «զազրելի սիպ» անուանելով իր նկարածը, ուրախ է, որ իր յօդուածը նպատակի է հասնում,—ներկայացրած հայելին պարզ լուսանկարներ է հրապարակ նետում,—եւ վերջացնում է այսպէս.—ինչ վերաբերում է մասնաւորապէս իրան՝ պ. Ռ. Յովհաննէսեանին, այո, պնդում եմ հրապարակօրէն, որ նա եւս պատկանում է նոյն տիպին։ Ընդունում եմ պարոնի առաջարկութիւնը՝ երկու կողմից մարդիկ ընտրելու, գործը քննելու, փաստերը ստուգելու եւ հետեւանքը հրապարակ հանելու համար»։

Առեանի առջեւ, օրա հարցման՝ թէ խոստովանում է ինքը «Ո՞վ է մեղաւոր» յօդուածը գրելիս Յովհաննէսեանին աչքի առաջ ունենալը, պ. Դաւթեան հաստատական պատասխան է տալիս։

Այնուհետեւ առանը լսում է կողմերին, կարդում է պ. Դաւթեանի ներկայացրած գրութիւնները, հարցափորձում է վկաներին՝ կողմերի ներկայութեանը եւ նորից լսում է կողմերից իւրաքանչիւրի վերջին խօսքը։ Պատուի առանը ուշադրութեամբ քննելով եւ կշռելով բոլոր բանաւոր փաստերն ու բացատրութիւնները, մատուցված գրաւոր ցուցմունքները, վկաների ասածները եւ նորից կարդալով «Մշակ» լրագրի վերոյիշեալ համարներում զետեղված թղթակցութիւնները, խղճի մաքով ու միաձայնութեամբ եկաւ հետեւեալ եզրակացութեան։

1) Քննութիւնը չը հաստատեց, թէ Ռուբէն Յովհաննէսեան իւրացրած լինի բանուորներից իրան պահ տուած կամ յանձնված որ եւ է գրքում։

2) Ներսէս Դաւթեան, աչքի առաջ ունենալով իր մեղադրութեան վերին աստիճանի ծանրութիւնը, իրաւունք չունէր, յենվելով միայն շրջաբերվող լուրերի եւ տակաւութիւ եւ ոչ հիմնաւոր կերպով քննված փաստերի վրա, իր 2-րդ յօդուածով մասնաւորապէս լինել Ռուբէն Յովհաննէսեանի վրա։

3) Աչքի առաջ ունենալով մեղադրութեան յօդուածը գրելուց յետոյ՝ քննութեան ժամանակ հրապարակ եկած ինչ ինչ դէպքեր, առեանը համարում է, թէ Ռուբէն Յովհաննէսեան դրամական խնդրում, յիշեալ դէպքերի նկատմամբ, այնքան անճիշտ է գտնվել՝ որ կարող էր փողերի գործադրութեան մասին տեղիք տալ կասկածանքի։

Պատուի Առեանը, համաձայն կողմերի ցանկութեան, իր այս վճիռը հրատարակել է տալիս «Մշակ» լրագրում։

Սմբատ Խաչատրեան, Մկրտիչ Նուռատարեան, Սամսոն Յարութիւնեանց, Աստուածատուր Վաչեանց։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Նոյեմբերի 22-ին

Կեանքից վերցրած պիես, լաւ ոյժեր, էժան գներ—ահա մեր ապագայ թեմի աջողութեան գրաւականը։ Իրրեւ օրինակ կարող է ծառայել երեկվայ ներկայացումը, թէեւ պէտք է ասել, որ գները այնքան էլ մատչելի չէին։ «Կատաղի փակ է, այլ եւս տոմսակ չը կայ»—այս խօսքերն էինք լսում Թատրոնի մուտքի առաջ խմբված ահագին բազմութեան մէջ, իւրաքանչիւրը պատրաստ էր իր ունեցած չունեցածը տալ, միայն թէ տոմսակ գտնվէր։ Շատերը զարմանում էին, որ հայոց ներկայացումն էլ կարող է այդպիսի մուտք տալ։ Նրանցից իւրաքանչիւրը մտածել էր այսպէս. «Ի՞նչ կարիք կայ շտապելու, երեկոյեան հարիւրաւոր տոմսակներ կը լինեն, կառնենք»։ Բայց տեսան, որ չեն կարող առնել եւ փոշմանեցին։ Գեղեցիկ ապագայ։

Այդ երեկոյ խաղում էին «Վանիշինի զաւակները» Աբէլեանի մասնակցութեամբ։ Պիեսան այնքան կենդանի է, այնքան կապ ունի հայկական կեանքի հետ, որ մարդ տեսածների մէջ համոզվելու համար կարիք չէր զգում մտքով վերանալ դէպի ուրիշ ընտանիքները։ Նրա առաջ իսկոյնեւեթ ներկայանում է հայ վաճառական ընտանիքը իր կեղծ կրթութեամբ, փչացած զաւակներով, խայտառակ դայեակներով։ Մեզանում մարդիկ կան, որոնք ուսման վրա մխած կօղէկն անգամ աւելորդ են համարում, բայց սովորութեան կամ, աւելի ճիշտն ասած, ժամանակի պահանջման համեմատ նրանք ստիպված են լինում ծախսեր անել իրանց զաւակների կրթութեան համար, թէեւ երբեմն այդ ծախսերն իրանք անմիջապէս չեն անում, այլ յանձնում են իրանց կանանց, որովհետեւ ափսոսում են իրանց ձեռքերով այդպիսի մի աւելորդ ծախս անել։ Մենք ծնողներ ունենք, որոնք չը գիտեն թէ իրանց զաւակը որ դասարանի աշակերտ է։ Նա մ'այն գիտէ, որ իր որդին ամեն օր գրքերը վերցնում եւ դուրս է գնում, իսկ թէ ուր, ինչի համար, այդ արդէն իրանց գործը չէ։ Գիրքը ծախսերի աղբիւր է, ուրիշ ոչինչ։ Եւ զարմանալի չէ, որ այդպիսի ծնողները վերջ ի վերջոյ իրանց տաւնարակ որդիների մէջ միայն այտատեռված մարդիկ են տեսնում. այդ ժամանակ միայն նրանք հետաքրքրվում են իրանց որդիներով եւ տեսնելով նրանց սարսափելի կաշառութիւնը, հարցնում են. «Չէ՞ որ ես ուսում եմ տուել որդիներիս. իսկ նրանք ինչու այդպէս փչացած են. ինչն է պատճառը»։ Վանիշինի կրտսեր որդու պատասխանը ամեն ինչ պարզում է. «Որովհետեւ մենք վերեւումն էինք ապրում, իսկ դուք ներքեւում, ասում է գիմնազիստ որդին հօրը, որ նշանակում է.—դուք մեզ վրա կանոնաւոր չէք հսկում, իսկ մենք անում էինք այն, ինչ որ ցանկանում էինք»։

Այդպէս է եւ մեր վաճառականների ընտանիքում։ «Վանիշինի զաւակների» երեւան գալը մեր բեմի վրա մի Թանգագին գտնտ է, ափսոս միայն, որ շատ վատ է թարգմանված։ Երրորդ գործողութեան մէջ, ուր Վանիշինը իր կըրտսեր որդուց իմանում է իր զաւակների վարած կեանքը, ուր նա տեսնում է, որ նրանք փչացել են միայն նրա համար, որ ընտանիքի հետ ոչ մի կապ չեն ունեցել, ուր բոլորովին իրան կորցրած խորհուրդ է հարցնում իր գիմնազիստ որդուց, որին մի քիչ առաջ դուրս էր վռնդել անից, որդու զարմանքը այդ խորհրդի վերաբերմամբ, նրանց փոխադարձաբար գրկախառնութիւնը, հեկեկանքը, անելանելի դրութիւնը այնքան բնական, ազդու եւ սիրտ ճմլող էր, որ այդ բօպէին թատրոնը սգաւոր տան էր նմանվում եւ թաշկինակներ էին, որ մօտենում էին աչքերին։

Ահա թէ որտեղ է թատրոնի ոյժը, գաղտնիքը։ Աբէլեանը աննման էր այդ բօպէին։ Ափսոս միայն, որ միւս դերակատարները համարեա առանց բացառութեան չէին պահում անսամբլը։ Ներկայացման վերջում ահագին օվացիաներ տարքեցին. անվերջ ծափահարութիւններով դղրդում էր դահլիճը։ Մարդ ակամայ բերկրանք էր զգում, որ հայոց բեմն էլ կարող էր այդ երեկոյեան նման կենդանանալ։

Ուշադրութեան արժանի է եւ այն, որ այդ երեկոյեան հրաւիրված էին տեղական Ս. Նինայի դպրոցի եօթներորդ դասարանի մի խումբ աշակերտուհիներ, մի բան, որ մինչեւ այժմ արված չէ թատրոնական վարչութեան կողմից, գոնէ այս տարվայ սեզոնում, այն ինչ ուսումնական խումբը միշտ հրաւիրում է։ Ցանկալի կը լինէր, որ հայոց խումբն էլ միշտ հրաւիրէր։

Հետեւեալ ներկայացումը տեղի կունենայ 25-ին. կը խաղան «Կեանքի արժէքը» պիեսան։

Սիրանոյշի մասնակցութեամբ։ Տիկ. Սիրանոյշը դուրս կը գայ վեց անգամ։

Տեսնենք մեր հասարակութիւնը ինչ չափով ցոյց կը տայ համակրանք դէպի Սիրանոյշը։

Մ. Ղ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Նոյեմբերի 16-ին

Մեր գաւառի քրէական քրօնիկօնը միշտ հարուստ է եւ ճոխ. բազմաթիւ եւ բազմատեսակ յանցանքների մի խայտաբղէտ շարք է ներկայացնում նա։ Չը նայած որ դատարանական հաստատութիւնները, նահանգական ու գաւառական վարչութեան օրգանները բոլոր օրինաւոր միջոցներով անընդհատ կռիւ են մղում այդ չարիքի, յանցանքների անօրինակ բազմաչատութեան դէմ, նա չէ թուլանում, մի տեղ ժամանակաւորապէս անհետանալով, արտայայտվում է մի ուրիշ տեղ աւելի տոսկալի ձեւերով ու չափերով։ Աչքի է ընկնում այն, որ ամենաքսամնելի յանցանքները գործում են ոչ թէ պրոֆէսիոնալ աւազակները, դուրս ընկած դաշաղները, այլ տնաքոյս, այսպէս ասած, տանու գողերն ու մարդասպանները։ Վերջին տարիներս առաջինների թիւը նուազում է, իսկ վերջիններինը բազմանում. որանք սուտ վկայութիւնների, բարեկամների հովանաւորութեան ու թշնամիների ահաբեկման միջոցով աւելի հեշտ են պաշտպանվում ու խուսափում օրէնքից։ Այս անգամ ես կանգ կառնեմ այդպիսի հերոսներից մէկի ձեռքով կատարած մի արտասովոր յանցանքի վրա, որը բնորոշում է ոչ միայն նրան, այլ եւ այն միջավայրը, որտեղ նրապէսները գործում եւ իշխում են։ Դէպքը պատահել է ամսիս սկզբներին Նոր-Արմաւիր կամ Ղարարուլաղ գիւղում, որը գտնվում է Գեռաչէնից հինգ վերստի վրա։

Գիւղի վաշխառուներից մինը, անունով Փարի Մակի, գնում է հարսանիք։ Երբ ներս է մտնում, սաստիկ նեղանում է, որ նստած հիւրերը վեր չեն կենում տեղերից. սկսում է իսկոյն հայհոյել նրանց ամենասանդակտ խօսքերով։ Մի գիւղացի, Գէորգ Դալլաքեան, յանդգնում է ասել նրան՝ «չիտակ խօսա»։ Մակին սկսում է առանձնապէս նրան հայհոյել, սպառնալով նրա բոլոր ապրանքը գողանալ տալ, նրա խոտի դէզը, մարագը հրդեհել եւ այլն։ Դալլաքեան առարկում է նրան, ասելով «էդ քո ըռեխը չի, աշխարհս անտէր, անօրէնք չի, դու ինչացու ես, որ կարողանաս անպատիժ էդ բաներն անել։ Ցոյց տալու համար, որ նա իր փողի ու կապերի շնորհով կարող է ամեն բան անել ու խեղճ գիւղացու գլխին ամեն տեսակ օյին դնել, Մակին հանում է դաշոյնը եւ սկսում իրար եռեւից խփել Դալլաքեանին, ասելով՝ «այ, հիմի լաւ թամաշա արա, տես, ես ինչացու եմ, տես իմ ձեռքիցն ինչ ա գալիս ու գնա էն աշխարհում քո պապերին նեղն արա, պատմի»։

Գիւղի մի քանի հոգի, ամենով Փարի Մակի, գնում է հարսանիք։ Երբ ներս է մտնում, սաստիկ նեղանում է, որ նստած հիւրերը վեր չեն կենում տեղերից. սկսում է իսկոյն հայհոյել նրանց ամենասանդակտ խօսքերով։ Մի գիւղացի, Գէորգ Դալլաքեան, յանդգնում է ասել նրան՝ «չիտակ խօսա»։ Մակին սկսում է առանձնապէս նրան հայհոյել, սպառնալով նրա բոլոր ապրանքը գողանալ տալ, նրա խոտի դէզը, մարագը հրդեհել եւ այլն։ Դալլաքեան առարկում է նրան, ասելով՝ «էդ քո ըռեխը չի, աշխարհս անտէր, անօրէնք չի, դու ինչացու ես, որ կարողանաս անպատիժ էդ բաներն անել։ Ցոյց տալու համար, որ նա իր փողի ու կապերի շնորհով կարող է ամեն բան անել ու խեղճ գիւղացու գլխին ամեն տեսակ օյին դնել, Մակին հանում է դաշոյնը եւ սկսում իրար եռեւից խփել Դալլաքեանին, ասելով՝ «այ, հիմի լաւ թամաշա արա, տես, ես ինչացու եմ, տես իմ ձեռքիցն ինչ ա գալիս ու գնա էն աշխարհում քո պապերին նեղն արա, պատմի»։

—Ձեռ ուզում, ինչ կայ չը կարողանալու, ես քեզ չեմ հասկանում։

—Ձեմ ուզում... բաղդերի շղթան անտեսանելի է, բայց նա կաշկանդում է երկաթից աւելի ամուր, ինձ կապում է մի ճակատագիր, անողոք ու անխուսափելի. այս մութ, մռնչացող, հեծեծող բեռը միայն շարան շարան գերեզմանների վրա վար դնել կարող եմ, եւ ես վազում եմ այնտեղ հասնելու համար. վազում եմ բեռս թափելու համար եւ չեմ հասնում։

—Ինչու, մի՞թէ շատ հեռու է։

—Շատ հեռու չէ, ես երբեմն նոյն իսկ խիստ մօտենում եմ, բայց չեն թողնում։

—Չեն թողնում, ո՞վ։

—Քամիները, բոլոր քամիները, խօսք մէկ արած, դրել են իմ մէջքին այս ահաւոր բեռը եւ ինձ մղում են երկրէ երկիր. եւ ես վազում եմ, վազում առանց դադար ու հանգիստ գրտնելու։ Անցեալները նոյն իսկ ես այնտեղ էի, այ այն լեռնաշղթայի մօտ,—նա մատով ցոյց տուեց հեռուն,—մի քանի քամիներ միաժամանակ փչում էին զանազան կողմերից, մէկը մղում էր ինձ դէպի հարաւ, միւսը՝ դէպի հիւսիս, եւ քիչ մնաց՝ ես նրանց ուժեղ թափով վեր բարձրանայի եւ տարվէի երկնքի երեսից. ախ երանի թէ այդպէս լինէր, երկրի վրա էլ տեղ չունեմ, գլուխ դնելու մի անկիւն չունեմ, գոնէ տարվէի վերեւ, ամպերի մէջ, ամպերի հետ, իմ հառաչանքով կայծակների հետ ճայթէի, իմ արցունքով անձրեւի հետ անէծք տեղայի երկրի վրա, քամիների հետ մռնչայի ծխնելոյզների մէջ եւ ամեն տեղից, ուր ես անցնէի, ներքեւի ապրողների մաղերը դիզանային տարափից. թէ չէ այսքան ցաւը, հառաչանքը, արցունքն ու արիւնը ես մենակ ուր տանեմ, ինչպէս տանեմ։ Տեղ չը կայ, չը կայ. ես յոգնած եմ, ոսկորներս ցաւում են, ես խեղճ եմ ու տառապած։ Եւ նա հեկեկաց, եւ ես տեսայ խաւարի մէջ կրակէ արցունքներ, որոնք այրող աչքեր ձեւացրին նրա տանջված դէմքին։

Վուռռ, վը՞ղղ, վուռռ... քամին էր, կատաղի ու ցուրտ։

—Հանդարտ, հանդարտ, անգութ, ահա գընում եմ, քանի՞ դար է, բաւական չէ։

—Լսիր, տուր ինձ քո բեռի մի մասը։

—Իմ բեռի մի մասը՞... որ մասը։

—Կէսը։

—Խեղճ, տանել չես կարող։

—Մի փոքր մասը։

—Բռնիր, ահա։

Եւ նա դրեց իմ մէջքին մի փոքրիկ, շատ փոքրիկ մասը այն մութ զանգուածից, այն մըռայլ բեռից։ Եւ ես զգացի ինձ ինչպէս մի հրակայ լերան ծանրութիւնը մէջքիս. կուրծքս ճնշվեց անհնարին ցաւից, ես անքացի, քամու թափի տակ իմ էլ ոսկորները ճարճատեցին, աչքերիցս արցունքը ցայտեց եւ ես հեկեկացի։

—Ծանր է, հարցրեց նա, ցաւակցաբար։

—Ես մեռնում եմ, քայլել չեմ կարող։

—Այսպէս է, օչ ոք աշխարհում տանել չէ կարող, բացի ինձանից։ յետ տուր ինձ իմ բեռը, թող մենակ կրեմ, շնորհակալ եմ, որ գոնէ փորձեցիր, ուրիշներն այդ էլ չեն անում եւ հոհոռում են իմ անքացի, իմ հառաչանքի վրա։

Եւ նա խլեց իմ մէջքից փոքրիկ բեռը, կըրկին ձգեց իր մէջքին, ցնցվեց, նորից լսվեցին հառաչանքներն ու լացը, նորից քամին մռնչաց կատաղի կերպով. եւ ծանր ցուպը գետին զարկելով՝ թափ առաւ, սլացաւ քամու հետ, ինչպէս մրրկատար ամպ։ Ես լսում էի նրա աղեխարշ հեծկլտոցները, նրա հեկեկանքները. փոշմանեցի, որ բեռը յետ տուի։

—Կաց, կաց, ճչացի բոլոր ուժով։

Իզուր, նա հեկեկում էր եւ սլանում քամու հետ։

—Կաց, կաց։

Նա թռչում էր անընդհատ. ես մնացի մենակ, կանգնած խուլ անապատում, խեղդող խաւարի մէջ, մէջքիս վրա բեռի տեղը մնացել էր մի կսկիծեցնող ցաւով. քամին փչում էր կատաղաբար. ես ընկայ ձեռն վրա եւ հեծկլտանքը խեղդեց իմ կուրծքը. ես լալիս էի մենակ, անտէր ու խեղճ այն մռայլ սեւ անապատում։ Ապա վերկացայ եւ վազեցի դարերի ճամբորդին հասնելու, եւ այն ժամանակից թափառում եմ աշխարհի վրա ամեն տեղ, փնտռում եմ դարերի ճամբորդին. տա՞ դու չես տեսել նրան, դարձաւ նա դէպի ինձ երեսիս նայելով։

Ես լուռ էի եւ խորասուզված մտքերի մէջ։

—Ջես պատասխանում. նա վերկացաւ, մի փոքր յետ յետ քաշվեց։

—Է՛հ, մնաս բարով, ես կերթամ, իսկ դու նստիր այդտեղ, նայիր ալիքներին ու մտածիր, մտածելը լաւ բան է, դու էլ փիլիսոփայ կը դառնաս, մնաս բարով...

Գիշերային խաւարի մէջ նա մի վայրկենում անյայտացաւ ստուերի պէս, գետը շառաչելով անցնում էր իմ առաջից, խաւարը խեղդող դարձաւ, սիրտս լի էր ցաւի զգացմունքով, իսկ գլուխս՝ սեւ, մռայլ մտքերով։

Այնուհետեւ ես նրան էլ երբէք չը պատահեցի։

Ա. Ահարոնեան

Մի քանի կառաղի հարուածներից յետոյ Դալլաքեանը մնռնում է։ Հիւրերը, սարսափահար եղած, չեն համարձակվում միջամտել եւ ազատել դաղանից նրա խեղճ զոհին։ Սպանվողը, մեռնողը գիւղի խեղճերից, հաշարներից է, իսկ սպանողը դիւղի «զուրդերից», մարդագէլից է, գիւղի հրամանատարը, աէրն է հարեւա բառիս բուն մաքով. նա այն մարդն է, որից բոլորն էլ վախենում են, որն իր փողով ու արաղով կարող է բոլորի բերանները էլ փակել, «զմբռել», որի տանը գիւղի տանուտէրը, աէրաէրը, դատաւորն ու գղիրը գինովարաղով միշտ «թրջում են իրանց բողազները»։

Կատարվում, վերջանում է սպանութիւնը. աղմուկը, իրարանցումը դադարում է. կանանց ու երեխաներին սաիպում են լռել. հաւաքվում են տանուտէրը, դատաւորները, գիւղի իշխանները, «քեռդխուդաներն ու պաչօանիկները», Մակիի մշտական ակնորակիցները։ Կարճ խորհրդակցութիւնից, մի «այն-օյին խելք խելքի տալուց» յետոյ, «լօրդերի ժողովը» միաձայն որոշում է... յանցանքը ծածկել. Մակին, խելքի «գալով», պատրաստականութիւն է յայտնում իր թշուառ զոհի այրուն ու մանկահասակ որբերին 300 բուբլի տալ։ Դիակը հարանքատնից տանում են ու ձգում գիւղի ծայրի կալերից մինում։ Ներկայ եղողներին խստիւ արգելում են որ եւ է բան ասել իշխանութեան, սպառնալով, մանաւանդ կանանց, որ ձայն ու ծպտուն հանողը, մատնողը, թիքա-թիքա կը կոտորվի։ Դալլաքեանի կինը ներկայ չէ լինում հարանիքին։ Հետեւեալ առաւօտը դիակը իբր թէ պատահմամբ գտնում են մի կալում ու տանում խեղճի տունը։ Տանուտէրը «հրապարա» է ուղարկում պրիստաւին, որ Գէորգ Դալլաքեանը գիշերը հարանիքից վերադառնալիս սպանվել է անյայտ չարագործների ձեռքով։ «Այսու հրապարակս պատիւ ունեմ յայտնել ձերդ բարձր բարձրութեան»... թելադրում է նա գրագրին, Մակիի հետ առանձնակի «տեսնվելուց» յետոյ... Իսկական եղելութիւնը շուտով հանում է, ի հարկէ, պրիստաւին ու քննիչին։ Վերջինս լուրջ ձեռնամուխ է եղել գործին. յոյս կայ, որ նրան կաջողվի այդ հրապարակական սպանութեան մանրամասնութիւնները պարզել, ապացուցել մարդասպանի սոսկալի մեղքը եւ օրինաւոր պատասխանատուութեան ենթարկել նրան։

Սա. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսում հայոց ժողովրդական ներկայացումներ կազմակերպող մասնաժողովի գործունէութեան հաշուից երեւում է, որ անցեալ սէզօնում տեղի են ունեցել ընդամենը 19 ներկայացումներ, որոնց նարկայ են եղել 4,364 հոգի կամ միջին թւով 230 հոգի ամեն մի ներկայացմանը։ Մասնաժողովի եկամուտը այդ ներկայացումներից եղել է 384 բուբլի 20 կոպէկ, իսկ ծախսը հաւասար է 384 բուբլի 17 կոպէկի, այնպէս որ անցեալ սէզօնում մասնաժողովը դէֆիցիտ չէ ունեցել։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց դրամատիքական ընկերութիւնը դեկտեմբեր ամսի վերջերին տալու է մի գրական-երաժշտական առաւօտ՝ նուիրված Ադամեանի յիշատակին։

—

Երկուշաբթի, նոյեմբերի 24-ին, Թիֆլիսի քաղաքային դուման որոշեց յատկացնել հետեւեալ ռոճիկները ուղրավայի կազմին,—քաղաքագլխին—6000 բուբլի, ուղրավայի այն անդամին, որ պէտք է կատարէ քաղաքագլխի պաշտօնակատարի պարտականութիւնը—4100 բուբլի, ուղրավայի անդամներին—3000-ական բ. եւ դումայի քարտուղարին—2000 բուբլի։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց դրամատիքական ընկերութեան վարչութիւնը դեկտեմբերի 6-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում, կազմակերպում է ցերեկվայ մի ներկայացում աշակերտների համար պատրաստած գներով։ Այդ օրը կը խաղան Հաուպտմանի «Խորտուզված զանգակ» պիէսը։

—

Թիֆլիսի քաղաքային ուղրավան մօտ ժամանակներումս դիմել էր ներքին գործերի մինիստրութեան կենտրոնական վիճակագրական կոմիտէին, խնդրելով տեղեկութիւններ հաղորդել իրան Թիֆլիս քաղաքի բնակիչների թւի, նրանց պարապմունքի մասին եւ այլն։ Երկուշաբթի, նոյեմբերի 24-ին, Թիֆլիսի ուղրավայում պատասխան ստացվեց կենտրոնական վիճակագրական կոմիտէից, որ պետական ընդհանուր ժողովրդագրութեան միջոցով ձեռք բերված տեղեկութիւնները դեռ եւս չեն մշակված վերջնական կերպով, ուստի եւ առայժմ չեն կարող հաղորդվել ուղրավային։

—

Երկրաչափների այն խումբը, որ երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրի կովկասեան լիազօր Մեդվեդեւի կարգադրութեամբ ուղարկված էր Բօրչալուի գաւառը՝ չափելու եւ սահմանորոշելու պետական հողերը, վերջացնելով իւ աշխատանքի մի մասը՝ մօտ օրերումս վերադարձաւ Թիֆլիս։ Մէկ ու կէս ամսվայ ընթացքում յիշված խումբը չափել եւ սահմանորոշել է 28,000 դեսեատին պետական հողեր։

—

Ուրբաթ, նոյեմբերի 29-ին, նշանակված է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, որ պէտք է շարունակէ զբաղվել մեր երկրի գիւղատնտեսական կարիքներին վերաբերեալ զեկուցումների քննութեամբ։

—

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը. «Կիրակի օր, նոյեմբերի 24-ին, ուռուսական ժամի 11-ին, Հայլաբարի ժողովրդական Թատրոնում տեղի ունեցաւ հայերէն առաջին ներկայացումը. տուին պ. Սունդուկեանցի «Խաթաբալա» կոմեդիան։ Սակայն հէնց առաջին անգամից սիրողները անաջողութեան հանդիպեցին։ Արդէն ժամի 11-ն էր, որ 8—10 տոմսակ էր ծախված. իհարկէ չէր կարելի 8—10 մարդու համար ներկայացում տալ, ուստի խմբի մի քանի անդամները որոշեցին յետաձգել ներկայացումը, իսկ ոմանք հակառակվեցին։ Վերջապէս սիրողներից մի պարոն վերցրեց իր հաշուով բուական տոմսակներ եւ տարածեց անմիջապէս 5—10 կոպէկով, ոմանց էլ ձրի, եւ այդ օրվայ բոլոր վնասը իր վրա վերցնելով տարաւ։ Շաւէ-Գիւղի երեխաներին Թատրոն տեսնելու. առաջին կարգից բռնած մինչեւ Թատրոնի կէսը երեխաներով էր լցված, իսկ կէսը դատարկ, բուական չէր որ այդ օրը խաղում էին «Խաթաբալա», մեծ խաթաբալա էր այդ անպուսապ երեխաներին կարգի բերելը, կարծես խեղճ սիրողները նրանց հրաւիրել էին իրանց ծաղրել տալու։ Եւ իրաւ, փոքրիկ հանդիսականները ինչ գիտեն թէ Թատրոնն ինչ է, քանի որ այդտեղի՝ հալաբարցիների մէջ մեծերն էլ Թատրոնի մասին ոչ մի գաղափար չունեն։ Սիրողներն էլ լաւ չէին պատրաստվել այդ ներկայացման։ Եթէ այդ խումբը շարունակ ներկայացումներ տալու նպատակ ունի, լաւ կը լինէր, որ իւրաքանչիւրը իր դերը լաւ սովորէր եւ ժողովրդին տար Թատրոնի մասին ուղիղ, բնական հասկացողութիւն։

—

Կովկասեան հանքային ջրերում, որոնց բաբեկարգութեան մասին վերջին տարիներս առանձնապէս հոգ է տանում երկրագործութեան մինիստրութիւնը, եկող սէզօնին, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, հետեւեալ նորութիւնները կը մացնվեն.—Պեատիգորսկում մի առանձին շինութիւն կը կառուցվի լուսաբուժարանի համար. կը վերականգնեն, այժմ երեսի վրա ընկած Էմմանուէլեան պարկը եւ կը միացնեն նրան այսպէս անուանված Պրօվալի եւ պարկի հետ Գօրեաչայա լեռան վրա։ Մատրութիւն կայ մի քանի ամարանոցային հողաբաժիններ կազմել Կիսլովոդսկում, նոր պարկի սահմաններում, ոչ թէ միասին, այլ առանձին կէսերում, որ հնարաւորութիւն կը տայ վիլլաներ կառուցանել հէնց իրան պարկի մէջ, արտասահմանում սովորածների նման։ Կիսլովոդսկում վաննաների նոր շինութիւն կը բացվի հիդրոպատիական բաժանմունքով եւ նոյնպիսի բաժանմունք կը բացվի Էսսէնտուկում։ Վասէլինայա լեռան վրա Էսսէնտուկում կը սկսվի Թատրոնի շինութեան կառուցումը։ Բացի դրանից երկրագործութեան մինիստրը յանձնարարեց ջրերի դիրեկտոր Խվոշինսկուն բանակցութիւններ սկսել մասնաւոր ձեռնարկողների հետ Պեատիգորսկում եւ Կիսլովոդսկում էլէքտրական տրամվայներ շինելու մասին։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Քանի ժամանակ առաջ «Մշակում» պ. Զալխուշեանը մերկացրեց մի երկու խաչագողի տիպ. ցաւում եմ, որ ստիպված եմ նոյնը հաղորդել տեղիցս։ Ահա երկու ամիս է, խաչագողներից մէկը իր ցանցի մէջն է գցել մի քանի միամիտ աղանէրի. աջողեցրել է նրանցից փող կորզել եւ խոստացել մեծ բարիքներ այդ հարիւրների փոխարէն։ Օգտվելով տխմարների բանակից, նա փորձեց իր լրբութիւնների սահմանը ընդարձակել, միրաւորելով եւ իր խաբեբայութիւններին չը հաւատացողներին։ Նա իւրաքանչիւր քայլափոխում անպատուում, ծաղրում է իր «բարեբարներին».—«Դուք բոլորդ վայրենիներ էք, իսկ ես եւրոպական կրթութիւն եմ ստացել», ահա նրա տիրած մանեւրը։ Արդեօք երբ մարդիկ կը հասկանան, թէ ինչ ավանտիւրիստի հետ գործ ունեն։ Մինթէ XX-դ դարումն էլ կարելի է խաբեբաների ձեռքին խաղալիք լինել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Բոստոն, նոյեմբերի 17-ին

Անցեալ շաբթու կատարվեցաւ Ամերիկայի քաղաքական ընտրութիւնները։ Նախագահ փոխելու տարի չէ, անոր համար քուէարկութիւնը աղմկալից չէր, սակայն նկատելով քաղաքական պարագաները՝ աս տարվան ընտրութիւնները շատ կարեւոր կը համարվին։ Տիրող վարչութեանը աջողեցաւ մեծամասնութիւնը պահպանել կոնգրէսին մէջ ամենայն վնասով։

Ամենը կը հաւատան հիմա, թէ հանրավարական կուսակցութիւնը իր զեղծումներուն համար ջախջախիչ պարտութիւն մը պիտի կրէր, եթէ նախագահ Ռուզվելթի ձեռք չը դնվէր քաղաքական դեկը։

Վերջին քանի մը ամիսներու միջոցին նախագահին խօսքերը եւ մանաւանդ անոնց համապատասխան գործերը համոզեցին հասարակութիւնը, թէ ժողովրդին ամենէն ազնիւ ու անվախ բարեկամն է Ռուզվելթ, մարդ մը որ իր համոզումներուն տէրն է, որ ոչ փառքէ կը շլանայ եւ ոչ ալ ճնշումի առջեւ տեղի կուտայ։ Երկաթի պէս ամուր կամքին հետ միացուցած հեռատես միտք մը եւ պայծառ դատողութիւն՝ նախագահը յաջողեցաւ ածուխի աղեռալի գործադուլը վերջացնել, քաղաքական անխուսափելի խռովութեան եւ հաւանական արիւնհեղութեան առջեւ առնել, ինքը մենակ կրցաւ ստիպել խրատապարանոց հարուածները գլուխ կախել իրաւարար տասեանի գաղափարի առջեւ։

Այդ մեծ ծառայութիւնը ուրիշ ամեն գործէ աւելի ճիշդ ժամանակին ազատեց իր կուսակցութիւնը անխուսափելի անկումէ, ինչպէս երկիրը անտեսական տագնապէ։ Ալ որոշ է թէ Ռուզվելթ պիտի ըլլայ 1904-ի նախագահական ընտրելին, եւ դժուար չէ հիմակուընէ տեսնել յաջողութիւնը անխոնջ մարդուն։

Աս տարվան ընտրութեանց միջոցին ամերիկացի հայերս չափէն աւելի ձեռնպահ մնացինք։ Մենք մեր ցաւերու մէջ ամփոփված դուրս ալ չուզեցինք նայել ուրիշներու վէճն ու կռիւը դիտելու, չէ որ մենք արդէն պէտք եղածէն աւելի ունենք այդ վէճերէն։ Տեղական հայ Թերթերը չը գրեցին օրվան ամերիկեան խնդիրներու մասին։ Նկատելի է այդ պակասը ամեն ժամանակ, աս պարագային աւելի. Թերթերը իբրեւ լուր հրատարակեցին ընտրութիւններու արդիւնքը, ինչպէս կարելի է «Մշակն» ալ հրատարակեց հեռագրական գործակալութիւններէն առնելով։

Հայ Թերթերու չարքին մէջ բացառութիւն էր նորածին «Քաղաքացին» Ֆիլիֆորնիոյ Ֆրէզնօ քաղաքին հայ Թերթը, որ կերեւի թէ ընտրական պայքարին մէջ մանելու համար կեանք առեր է։ Մնդիր է սակայն, թէ խմբագիրը Ամերիկայի տեղական կեանքին եւ կուսակցութեանց պատմութեան ու սկզբունքներուն այնքան ծանօթ է, որ կրնայ իր հայ ընթերցողներուն ճանչցնել թէ ինչ է իրանց պարտը կամ որ կուսակցութիւնը աւելի նպատաւոր է իրանց շահերուն։ «Քաղաքացի»-ին լոյս տեսած Թիւերուն մէջ այդ կարեւոր խնդիրներու վրա գրուած լուրջ յօդուած մը չերեւցաւ, Թերթը միայն խրատ կուտայ, որ հայերը քուէ տան ռամկավարականներու ընտրելիներուն. ուրիշ տեղ մը կը պատմէ նաեւ, թէ ռամկավարական մեծ ժողովի մը մէջ բեմին վրա պատուաւոր մարդոց շարքը նստեր էր նաեւ Թերթին խմբագիրը։

Ֆրէզնօ հայկական խիստ կարեւոր կենտրոն մը կը դառնայ, շատ կարելի է քիչ առենէն գաղթականութեան ծանրութեան կենտրոնը դէպի Արեւմուտք հակի, թէ երկրէն եւ թէ Արեւելքի քաղաքներու հայերէն մշտատեւ հոսանք մը կայ դէպի Քալիֆորնիա։ Հոն գնացողները ընտանիքի տէր գաղթականներ են, Ամերիկա մնալու որոշում առողջ մարդիկ։ Ֆրէզնօ կան շատ հողատէրեր, ամենը գրեթէ առանց բացառութեան կառավարութեան եղանակէն ուղղակի շահ ունեցողներ, որքան փափագելի էր որ այդ հայկական կարեւոր գաղութին արժանի առաջնորդող մը գտնուէր, մասաւոր ընդունակութիւններով քիչ շատ օժտված մէկը յանձն առնէր Արեւմուտքի մէջ հրատարակվող առաջին հայ Թերթին խմբագրութիւնը, գոնէ քուէ տուողները գիտնային իրանց տեղական շահերը ճանչնալ։ Զը գիտնաք սակայն թէ Արեւելքի մէջ հրատարակվող հայ Թերթերը լաւ խմբագիրներ ունեն, ամենն ալ մէկ մէկ փորձանք. զորն ասեմ եւ զորն խոսավանեմ։

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հաղորդում են «Temps» լրագրին, թէ ռուսաց դեսպանի դիմումներից դրդված՝ Բ. Դուռը Սօլունի, Մոնաստիրի եւ Կոսսովի վալիներին շրջաբերականներ ուղարկեց, որոնց մէջ նրանց հրահանգներ են տուած վարչութեան մասին։—Նոյեմբերի 17-ին մեծ վիդիրի մօտ տեղի ունեցաւ մինիստրների խորհուրդ, որը երկար զբաղվեց մակեդոնական գործերով։ Վիէննայի «Information» լրագրի տեսակով, մակեդոնական ապատամբութիւնը ոչ միայն չէ դադարած, այլ եւ ուժեղացել է։ Սալոնիկում եւ մակեդոնական միւս քաղաքներում տիրում է սաստիկ յուզում։ Շատերի կարծիքով, ապատամբութիւնը շուտով կը բռնկէ ամբողջ Մակեդոնիայում։ Զը նայելով ձմեռվայ ցուրտերին՝ ապատամբների թիւը աւելանում է։ Նոյն լրագրի տեսակով, «Македонская планина» կոչված հովտում, 11 վերստ բուլգարական սահմանագլխից հեռու, նոյեմբերի 12-ին, տեղի ունեցաւ կանոնաւոր պատերազմ ապատամբների եւ Թիւրքերի մէջ, որի ժամանակ ապատամբներից սպանվեցին 302 եւ վիրաւորվեցին 143 հոգի։ Թիւրքերի կորուստները Թէեւ աւելի մեծ էին, բայց պատերազմի դաշտը մնաց նրանց ձեռքում։ Ապատամբները ունէին այդ կուսում եւ մի Թնդանօթ։

—Լօնդոնի քաղաքական շրջանները չափազանց անհանգստանում են այն պատճառով, որ Ֆրանսիան ուղարկել է դէպի Մարոկկոյի սահմանները 15 առաջնակարգ մարտանաւեր։ «Manchester Guardian» հաղորդում է, թէ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասէ առաջարկել է Լօնդոնի կաբինէտին համաձայնութիւն կապել երկու պետութիւնների մէջ հետեւեալ պայմաններով.—Ֆրանսիան ճանաչում եւ ընդունում է Անգլիայի իրաւունքները Եգիպտոսում եւ հրաժարվում է իր բոլոր պահանջներից Արեւելեան ովկիանոսի ջրերում, իսկ Անգլիան համաձայնվում է այն բանին, որ Ֆրանսիան տիրէ Մարոկկոյի արեւելեան մասին։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ անգլիական Էդուարդ VII-րդ թ՝ագաւորը վճռեց մի յատուկ միսիա ուղարկել Թէհրան՝ պարսից Շահին յանձնելու համար Ծնկակապի շքանշանը։ Այդ միսիայի գլուխ կը լինի կանգնած վիկոնտ Դաուս։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ Իշխան Պավէլ Ալէքսանդրովիչի պալատի կառավարիչ շտալմէյստէր Ֆիլոսոֆով նշանակված է Նորին Կայսերական Բարձրութեան գործերի կառավարիչ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովը հաւանութեամբ վերաբերվեց Բալֆուրի հաղորդած տեղեկութեանը այն միջոցների մասին, որոնք պէտք է ձեռք առնվեն Գերմանիայի հետ միասին Վէնեզուէլայի դէմ։ Կրանբորն յայտնեց, թէ Անգլիան ոչ մի պարտաւորութիւն չէ յանձնառել իր գաղթականութիւնների շաքարը հաւասարաչափ մաքսի ենթարկելու վերաբերմամբ։

ՄՕՍԿՎԱ։ Մոսկվայի գիւղատնտեսական ընկերութիւնը միջնորդում է, որ անասունների վարակիչ հիւանդութիւնները վերջանալու վերաբերմամբ նախազգուշացուցիչ կանոնների գործադրութիւնը յետաձգվի եւ որ այդ կանոնները վերաքննվեն։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը այսօր ընդունեց ռուսաց ծովային գործակալ Իշխան Դոլգորուկովին։

ԿԱՏԱՆՑԱՐՕ։ Առաւօտեան տեղի ունեցան երկու զօրեղ տարերկրեայ հարուածներ, որոնք վնաս չը հասցրին։

ԿԻԵՎ։ Անցաւ դէպի Վօրոնէժ Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ։

ՄԱԴՐԻԴ։ Մարոկկոի պրէսէնդէնտը գաղտնվում է Տացզում, ուր գրուեց գանձարանը, Թղթանօթները ե՝ զէնքի պահեստը ու հարկեր է առնում։ Նա դիտաւորութիւն ունի յարձակվել սուլթանի զօրքի վրա։

ԵԱԼՏԱ։ Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհին այցելեցին ֆրանսիական «Վօտուր» պահականաւը։ Մնալով 15 րոպէ, նոցա Կայս-

սերական Մեծութիւնները, ուղեկցված ոգեւորված «ուրաներով», գնացին «Շառանդարա» գրաստնաւը եւ վերադարձան Լիվադիա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՑՈՒԳԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ց. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (տիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին եւ նեարդային։

Մ. Գ. Աւետիսեանց—10—11 ժ. մորթու, վներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. Թարխանեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Կ. Ի. Դզեվիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. Թարխանեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։

Ա. Ն. Ճպակօվսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ), վներական եւ մորթու։

Գ. Ա. Թարխանեանց—7—8 ժ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. Նաւասարդեան—տանը. ծանկահան և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՌՓԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու եւ վներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի եւ արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բերբատովսկայա փողոց № 41. տան Արարատեանի։ Бебутовская ул. № 41, Домъ Араратова. 26—150

ԼՈՒՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԱՐԱՔՍԾ
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՑՆԵՐ
1903 թ. համար։

Պատի օրացոյցը իր մէջ պարունակում է Ե. հայերէն եւ ռուսերէն օրացոյցներ, հայերէն եւ ռուսերէն տառերով. իսկ ծոցինը ունի լիակատար եւ շատ հետաքրքիր յաւելուած։

Մի հատ պատի եւ մի հատ էլ ծոցի օրացոյց գնողը կը ստանայ մի օրինակ «Ծոցի երգարան» նուէր։

Պատի օրացոյցն արժէ հատով 50 կոպէկ, դուսմարով 35 կոպէկ։ Ծոցինը—հատով 20 կոպ., դուսմարով 15 կոպէկ։

Դիմել՝ Александрополь, Эрив. губ. Типографія Саноянца и Степанянца. 9—20

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԵՂՃԵՐԸ
ԼՈՒՍ ՏԵՍԱԻ

Գինն է 1 рублի

Ճանապարհածախսով 1 р. 20 կոպէկ։

Դիմել հեղինակին. Тифлисъ, редакція „Мурчъ“ եւ Գուստենբէրգ գրավաճառանոցը։ 1—3

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

հայ հմուտ բժիշկ եւ մանկաբարձուհի։ Ցանկացողները թող բարեհաճեն դիմելու ասնուատէր Խաչատուր Միքայէլեանցին։ Въ Верхніе-Акулисы. Старшинѣ Микаелянцу. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

սրանով հաղորդում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ այս տարվայ նոյեմբերի 28-ին, ցերեկուայ ժամի 1-ին, նրա դիւանատանը տեղի կունենայ աճուրդ՝ կապալով տալու. 1) Հալաբարի քաղաքային հողաբաժինը՝ 1829 դեսեատին եւ 1860 քառակուսի սաժէն տարածութեամբ եւ 2) Կուկիայի քաղաքային հողաբաժինը 888 դեսեատին եւ 1860 քառ. սաժէն տարածութեամբ վարուցանքի, խոտարքի, արօտների եւ այլ անհասական պարապմունքների համար։ Պայմանագիրը կարելի է տեսնել ուղրավայի 4-րդ բաժանմունքի դիւանատանը բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, նոյեմբերի 30-ին, նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
ԸՆԴՐԻՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ

2—3

ՄԻ ՀԱՅ ՏԻԳԻՆ

որ աւարտել է Թիֆլիսի իգական գիմնազիան եւ Ժընէվի համալսարանը, ցանկանում է դասեր ունենալ տարրականներից, առաւելն եւ գլխաւորապէս ֆրանսերէն լեզուներից։

Դիմել առաւօտեան ժամի 10—4-ը՝ Веляминовская ул. д. Лорисъ-Меликова, № 19. 9—10

Յանձնարարական Վաճառատուն եւ Գրասենեակ
ԶՈՒՐԱԳ ՄԿՐՏՉԵԱՆ ԽՐԽՐԵԱՆՑԻ
ԵՐԵՒԱՆՈՒՄ

որտեղ կատարվում են ամեն տեսակ ապրանքներ գնելու, վաճառելու եւ տեղափոխելու յանձնարարութիւններ՝ ամենայն ճշդութեամբ եւ ձեռնտու պայմաններով։ 1—3

Товарищество

Брокаръ и К°
РЕКОМЕНДУЕТЪ
МОДНЫЕ ДУХИ

пріятные и продолжительные запахи

„Тубероза“ ♦ „Mon Parfum„
„Чудо“ ♦ “Idéal“
„Лѣсная Фіалка“ ♦ „Parfum Moderne“

(25) 4—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

ԴՈԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։

Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19. 4—24

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան—

Կովկասում կոնֆետի արդիւնաբերութեան

ՄԻՍԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՒԿՈՒՄ, Կարամէլ «ԻԻԲԻԼԻՑՆԱՑԱ» եւ տասնապակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Գատուէրներով դիմել. Թիֆլիս, Գավլովսկայա փողոց, սեփական տուն

Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։

82—100

Մոսկվա 1865 թ. Մոսկվա 1882 թ.
Սանկտ-Պետերբուրգ 1870 թ. Նիժնի-Նովգորոդ 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ

ԵՒ ՐԷՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐՈՒ ՊԱՐԳԵՒ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրված է Ռուսաստանից ՄԻՄԻԱՅՆ

ՐԷՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

որ հիմնված է 1860 թուականին

Խնդրում են ՐԷՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ գնելիս ուշադրութիւն դարձնել կրունկներ հեռաւեալ կնիքի վրա



Մանաւանդ ընկերութեան հիմնադրութեան «1860» թուականի եւ «Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ», խօսքերի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջ (գործարանի կնիքը)։

ՄԵԾ ՓԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԾԱԽՍ ԿԱՏԱՐՈՒՄ Է

„ՎԷՕՊՕԼԴ ՆԷՑՇԷԼԷՐ“ առեւտրական տունը

Ս.-Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդէսայում, ՐՕՍՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ Եկատերինբուրգում, Իրկուտսկում եւ Խարկովում.

10—85

Дозволено Цензурою, Тифлисъ, 26 Ноября 1902 г.

Электропечатная Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская ул.